

**ԵՊՀ 2022/2023 ուսումնական տարվա մագիստրատուրայի
առկա և հեռակա ընդունելության համար անհրաժեշտ
փաստաթղթերի ցանկ**

Մագիստրատուրայի ընդունելության համար դիմորդները պետք է **սքանավորեն և մուտքագրեն** հետևյալ փաստաթղթերը.

ա. բարձրագույն կրթության դիպլոմը և դիպլոմի հավելվածը (հավելվածի 1-ին էջը և գնահատականների միայն հայերեն հատվածը)

ԵՊՀ 2022թ. շրջանավարտները (դեռևս դիպլոմ չստացած) ներկայացնում են ակադեմիական տեղեկագիր՝ կնքված և ստորագրված ֆակուլտետի կողմից, իսկ ՀՀ այլ ԲՈՒՀ-երի 2022թ. շրջանավարտները (դեռևս դիպլոմ չստացած)՝ տվյալ ԲՈՒՀ-ի ռեկտորի ստորագրությամբ տեղեկանք՝ բակալավրիատի շրջանավարտ լինելու մասին, և ակադեմիական տեղեկագիր՝ կնքված և ստորագրված:

Արտասահմանյան ԲՈՒՀ-ի դիպլոմ ներկայացնելու դեպքում դիմորդը դիպլոմի հետ պետք է ներկայացնի նաև «Ակադեմիական փոխձանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից» տեղեկանք՝ դիպլոմի համարժեքության մասին:

բ. լուսանկար (3/4 չափսի)

գ. գինվորական գրքույկի (առկայության դեպքում) բնօրինակը (անհրաժեշտ է ներբեռնել 1-4-րդ և 18-19-րդ էջերը)

դ. անձնագիրը (1-4-րդ էջերը) կամ նույնականացման քարտը (երկկողմանի)

ե. ընդունելության ծառայությունների համար գանձվող **3000** դրամի վճարման անդորրագիրը (ԵՊՀ «Արդշինբանկ» ՓԲԸ –ի հաշվեհամարին **2470101276000001**)

(Եթե փոխանցումը կատարված է online և անդորրագրի վրա չի երևում վճարման նպատակը և դիմորդի անուն-ազգանունը, ապա պետք է ձեռագիր ավելացնել և սքանավորել):